

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐԱԲԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՐԲ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՆՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Բարխուդարյան Ա.

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ

Փորք և միջին ձեռնարկությունների նկատմամբ պետության հատուկ քաղաքականության իրականացումը պայմանավորված է այդ բնագավառի առանձնահատուկ տնտեսական նշանակությամբ, ինչպես նաև փոքր և խոշոր ձեռնարկությունների միջև գոյություն ունեցող օբյեկտիվ տարբերություններով: Հոդվածում դիտարկվում են այն հիմնական գործոնները, որոնցով պայմանավորված են զարգացման առանձնահատկությունները խոշոր և փոքր ձեռնարկությունների միջև: Դիտարկելով զարգացած երկրներում կիրառվող փոքր բիզնեսի պետական աջակցության համակարգը, հոդվածում փորձ է արվում սահմանել Հայաստանում փոքր բիզնեսի պետական խրախուսման քաղաքականության հիմնական ուղղվածությունները:

Бархударян А. Основные направления государственной политики Армении в области малого и среднего предпринимательства. Осуществление государственной политики по поддержке малых и средних предприятий обусловлено особым экономическим значением этого сектора, а также существующими объективными различиями между малыми и крупными предприятиями. В статье рассматриваются те основные факторы, которыми обусловлены особенности развития малых и крупных предприятий. Рассматривая систему государственной поддержки малого бизнеса, действующую в развитых странах, в работе делается попытка определить основные направления государственного содействия малому бизнесу в Армении.

Barkhudaryan A. Main Directions of state policy of Armenia for support of small and medium enterprises. Implementation of the state policy of support for small and medium sized enterprises is reasoned by the crucial economic importance of this sector and by certain objective differences between small and larger enterprises. The article reflects on the major factors of the development peculiarities of small and medium sized enterprises. Taking into consideration the acting system of small enterprise support in developed countries, the article attempts to define the main directions of state small enterprise support policy for Armenia.

ՓՈՐԲ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐԱԲԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱՄԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Արևմուտքում պետության տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություն է համարվում փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման քաղաքականությունը: Ի հիմնավորումն այդպիսի քաղաքականության բերվում են տարբեր փաստարկներ՝ ինչպես քաղաքականության անհրաժեշտության, այնպես էլ այդ քաղաքականության ձևերի և իրականացման մեխանիզմների վերաբերյալ: Փորձենք հասկանալ այդ բնագավառում պետական քաղաքականության իմաստը և այնուհետև դիտարկել Հայաստանում այդպիսի քաղաքականության իրականացման նախընտրելի տարրերակները:

Տնտեսական և արդյունաբերական քաղաքականության առումով, պետության միջամտությունը փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման գործընթացին արդարացվում է նրանով, որ փոքր բիզնեսը կարևոր նշանակություն ունի երկրի տնտեսական զարգացման համար, սակայն, այն ի տարբերություն խոշոր ձեռնարկությունների, սահմանափակված է որոշակի արհեստական խոչընդոտներով: Տնտեսագետները սովորաբար արդարացնում են պետության միջամտությունը շուկայական մեխանիզմին այն ժամանակ, երբ առկա է շուկայի ոչ արդյունավետ ինքնակարգավորման փաստ: Օրինակ, Մեծ Բրիտանիայում փոքր ձեռնարկությունների աջակցման քաղաքականությունը փաստարկվում է հետևյալ կերպ.

– «Ցանկացած շուկայական համակարգում ձեռնարկությունն ինքն է պարտավոր իր մրցունակության բարձրացման միջոցով աճ ապահովել: Մակայն շուկաների ազդեցությունները հավասարապես են ազդում և՛ մեծ, և՛ փոքր ձեռնարկությունների վրա, և այդ պարագայում փոքր ձեռնարկությունները հատկապես յուրահատուկ խնդիրների են հանդիպում» [1]:

Մյուս կողմից, ոչ բոլոր դեպքերում են ակնհայտ այս բնագավառում պետական քաղաքականության անհրաժեշտությունը և նրա հնարավոր ազդեցությունները:

Այսպիսի մոտեցումը ձևակերպվում է հետևյալ կերպ.

– «Փոքր ձեռնարկությունների հանդեպ շուկայական մոտեցման ջատագովները իրենց տեսակետը բացառում են նրանով, որ ազատ շուկայական մեխանիզմը ունակ է ապահովել նոր ֆիրմաների օպտիմալ քանակություն: Նոր ֆիրմաներ կստեղծվեն այն բնագավառներում, որտեղ շահույթի ստացման հնարավորություններ կան, իսկ այն ոլորտներում, որտեղ կրճատվել է պահանջարկը, ֆիրմաները կվերանան: Պետության միջամտությունը այս գործընթացին կարելի է արդարացնել միայն այն ժամանակ, երբ հստակ որոշելի են այն հասարակական և տնտեսական օգուտները, որոնք ի հայտ կգան նոր ֆիրմաների ստեղծման պարագայում, կամ եթե ակնհայտ է, որ համախառն եկամտի բաշխման ընթացիկ ձևը բացասաբար է անդրադառնում նոր ապրանքների պահանջարկի վրա: Պետության կողմից ձեռնարկվող մի շարք միջոցառումների արդարացման համար հաճախ բերվում են բավականին անհիմն և վիճելի փաստարկներ: Օրինակ, պետական սուբսիդիաները սեփական գործ սկսել ցանկացողների համար կրեթեն նոր ֆիրմաների քանակության մեծացման և, միաժամանակ, փոքր ֆիրմաներում զբաղվածության աճին: Մակայն, մի խմբին սուբսիդիաներ հատկացնելու համար պետությունը պետք է նվազեցնի մի այլ խմբի կամ խմբերի բարեկեցությունը, և դժվար է ապացուցել, որ փոքր ձեռնարկություններին

սուբսիդիաների տրամադրման գույս արդյունքը կնպաստի ընդհանուր հասարակական բարեկեցության բարձրացմանը: Հետևաբար, անհրաժեշտ է մանրամասն դիտարկել բոլոր այն փաստարկները, որոնք բերվում են փոքր ձեռնարկությունների աջակցման քաղաքականության օգտին» [2]:

Փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում պետական քաղաքականության էությունը հասկանալու համար դիտարկենք այն հիմնական գործոնները, որոնցով պայմանավորված են զարգացման առանձնահատկությունները խոշոր և փոքր ձեռնարկությունների միջև:

Մասշտաբի ազդեցություն

Այս ազդեցության էությունը կայանում է նրանում է, որ ձեռնարկությունների միջին ընդհանուր ծախսերը (average total cost), որոնք որոշվում են ձեռնարկության ընդհանուր ծախսերի և արտադրության ռեսուրսների քանակի հարաբերությամբ, տարբեր են՝ կախված ձեռնարկության չափերից: Դա բացատրվում է տեխնոլոգիական տարբերություններով, ինչպես նաև այն հանգամանքով, որ մեծ ձեռնարկությունները, ի տարբերություն փոքրերի, օգտագործելով ավելի մեծ ծավալով արտադրական ռեսուրսներ, կարողանում են հասնել միջին ընդհանուր ծախսերի նվազագույն մակարդակին: Այս հանգամանքը համոզեցնում է նրան, որ փոքր ձեռնարկությունները մոյն արտադրանքը արտադրում են ավելի բարձր ինքնարժեքով և դառնում անմրցունակ մի շարք արտադրություններում:

Ուսուրսային բազա

Հայտնի է, որ Հայաստանում արդյունաբերական հումքի պաշարները չափազանց սակավ են և սահմանափակ: Այդ պատճառով մի շարք արտադրատեսակների հումքայնությունը պետք է ներկրվեն արտասահմանից: Ներկրման երկու տարբերակ գոյություն ունի՝ կամ օդային տրանսպորտով, կամ կոնտեյներային: 20 ֆուտանոց կոնտեյների ծավալով հումքը, ներառյալ տեղափոխման արժեքը, մոտակա երկրներից Հայաստան, միջինում կազմում է այնպիսի գումար, որը փոքր ձեռնարկությունների մեծ մասն ի վիճակի չէ վճարել: Փոքրածավալ հումքի ներկրման համար կարելի է օգտագործել օդային տրանսպորտը, սակայն գործող սակագների առումով տնտեսապես արդյունավետ է միայն բարձր արժեք ունեցող հումքի տեղափոխությունը: Այսպիսով, փոքր ձեռնարկությունների համար անհասանելի են այն արտադրությունները, որոնց հումքայնությունը պետք է ներկրվեն արտասահմանից:

Հարկավորման խնդիրներ

Փոքր ձեռնարկությունների հարկային վճարումները շրջանառության միավորի հաշվարկով մի քանի անգամ ավելի բարձր են, քան խոշոր ձեռնարկություններինը: Օրինակ, ցույց է տրված [3], որ Մեծ Բրիտանիայում հարկերի վճարման ծախսերը 2.5% են կազմում այն ֆիրմաների համար, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 15000 ֆունտ, և միայն 0.07% այն ֆիրմաների համար, որոնց տարեկան շրջանառությունը 2 մլն ֆունտից ավել է: Կարելի է եզրակացնել, որ նման ոչ միատեսակ ազդեցություն ունեն նաև այլ երկրների հարկային համակարգերը:

Ֆինանսավորման խնդիրներ

Հայաստանի փոքր ձեռնարկությունների համար այսօր չափազանց բարդեցված է բանկային ֆինանսական ռեսուրսների օգտագործումը: Դրա հիմնական պատճառներից են՝ անհրաժեշտ գրավի բացակայությունը, վստահելիության և վճարումնալիության գնահատման բարդությունները, բյուրոկրատական քաշքշուկները և այլն: Մասնավորապես կարևոր է այն, որ բանկերը միատեսակաբար չեն համարում բազմաթիվ փոքր վարկերի տրամադրումը, քանի որ փոքր և մեծ վարկերի բանկային սոլասերկման ինքնարժեքը մոտավորապես նույնն է:

Շահերի պաշտպանություն (lobbying)

Շահերի պաշտպանության հարցը խոշոր ձեռնարկությունների համար ինքնին լուծվում է այնքանով, որ քանով որ յուրաքանչյուր խոշոր ձեռնարկություն նաև խոշոր հարկատու է: Այդ պատճառով խոշոր ձեռնարկությունները միշտ պետության ուշադրության կենտրոնում են: Բացի այդ, խոշոր ձեռնարկություններն ի վիճակի են ունենալ մասնագիտացված իրավաբանների և փաստաբանների խումբ, ինչպես նաև ապահովել շահերի պաշտպանությունը (լոբբինգը) պետության օրենսդիր և գործադիր մարմիններում: Հակառակ պատկերն է փոքր ձեռնարկությունների համար: Նրանց շահերի պաշտպանության գործը պետք է իրականացնեն կամ հատուկ ստեղծված մասնավոր հասարակական ինստիտուտները (առողջապահներ, միավորումներ, առևտրի պալատներ և այլն), կամ պետությունն ինքը, իր առյուծների միջոցով:

Եզրափակելով վերը նշված գործոնները կարելի է նշել, որ փոքր ձեռնարկությունները խոշորների համեմատ կարող են գտնվել ոչ հավասար պայմաններում, հումքային, ապրանքային և ֆինանսական ռեսուրսների շուկաներում: Սակայն շուկայի ոչ արդյունավետ դրսևորումները անհրաժեշտ, բայց դեռևս բավարար հիմք չեն պետական համակարգի միջամտությունն արդարացնելու: Անհրաժեշտ է հաշվի առնել այդ միջամտության համընդհանուր ազդեցությունը, ինչպես նաև պետական միջոցառումների վրա կատարվող ծախսերը:

ՓՈԼՔ ԲԻԶՆԵՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՐԱՆՈՒՄՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցուրաբանչյուր պետական քաղաքականություն կամ միջոցառումների խումբ կարող է նպաստել հասարակական բարեկեցությանը: Չնայած փոքր բիզնեսի քաղաքականության նկատմամբ պետության ուշադրության ուժեղացմանը, այդ քաղաքականությունն ազդեցությունների վերաբերյալ մակրոտնտեսական հետազոտություններ դեռևս չկան: Այդ պատճառով հաճախ անտեսում են այդ քաղաքականության կողմնակի ազդեցությունները տնտեսության այլ ոլորտների վրա: Օրինակ, գտնում են, որ փոքր ֆիրմաները տնտեսության մեջ զբաղվածության ապահովման հիմնական աղբյուրն են: Ելնելով դրանից, ընդունված է, որ գործազրկության աճի ժամանակ անհրաժեշտ է իրականացնել մոտ ֆիրմաների ստեղծման գործընթացի խթանման և գործող ֆիրմաների աճի խթանման ինտենսիվ քաղաքականություն: Այնուամենայնիվ, նման միջոցառումները շուկայական տնտեսության պարագայում արդյունավետ են միայն այն դեպքում, երբ հնարավոր է ցույց տալ, որ պետության այս քաղաքականության արդյունքում տեղի է ունենում ընդհանուր հասարակական բարեկեցության գույս

հավելում: Եթե փոքր ֆիրմաների թվի աճը բերում է զբաղվածության փոխհատուցիչ, կամ մույնիսկ զերակշռող միակցեցմանը մեծ ֆիրմաներում, ապա ակնհայտ է, որ հասարակական քաղաքականության գոտու հավելումը բացասական է: Գործնականում գոտու հավելումի այդպիսի մակրոտնտեսական հետազոտությունները հազվադեպ են կատարվում մույնիսկ զարգացած երկրներում: Ուրեմն այդպիսի հետազոտություններն ավելի կարևոր են անցումային տնտեսություններում, ինչպիսին Հայաստանի տնտեսությունն է:

Չնայած փոքր և միջին ձեռնարկությունների սահմանումները տարբեր երկրներում տարբեր են, սակայն դրանց աջակցման պետական քաղաքականությունը բնութագրվում է մի շարք ընդհանուր հատկանիշներով՝

- փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրվող հարկային արտոնությունների համակարգ,
- գործազուրկներին աջակցության ծրագրեր սեփական գործ սկսելու հարցում,
- ֆինանսական օգնության ծրագրեր (վարկեր և երաշխիքներ),
- փոքր ֆիրմաների իննովացիոն գործունեության խրախուսում,
- պետական պատվերների ստացման աջակցություն,
- փոքր և միջին ձեռնարկությունների աջակցման տարածքային կետերի ցանց,
- աջակցություն արտաքին տնտեսական գործունեության իրականացման բնագավառում:

Բոլոր զարգացած երկրներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում փոքր և միջին ձեռնարկության բնագավառում իննովացիոն գործունեությանը: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում, օգտագործելով գիտահետազոտական աշխատանքներին ուղղված ընդհանուր ներդրումների ընդհանուրը 3%-ը, փոքր և միջին ձեռնարկությունները իրականացրել են խոշորագույն նորամուծությունների գրեթե 50%-ը: Այսպիսով, փոքր բիզնեսը ոչ միայն տնտեսության իննովացիոն գործընթացի կարևորագույն տարրերից է, այլև ներդրումների օբյեկտ:

Սակայն, մույնիսկ զարգացած երկրներում փոքր բիզնեսի ներդրումային աջակցման ծրագրերն ընդհանուր առմամբ վնասող են իրագործվում: Այնուամենայնիվ, պետությունը շարունակում է փոքր բիզնեսի խթանման և զարգացման ծրագրերը, քանի որ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացած ենթակառուցվածքը թույլ է տալիս փոխհատուցել շուկայական հսկաությունները՝ ապահովելով շուկայական միջավայրի ճկունությունը և կառավարելիությունը: Այդ ենթակառուցվածքի շնորհիվ հարթեցվում են պահանջարկի տատանումները, զարգանում է մրցակցությունը, ստեղծվում են նոր աշխատատեղեր, և զարգանում է տնտեսության իննովացիոն պոտենցիալը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ փորձենք սահմանել Հայաստանում փոքր բիզնեսի պետական խրախուսման քաղաքականության հիմնական ուղղվածությունները:

Խթանել գոյություն ունեցող փոքր ձեռնարկությունների աճը,

Այս միջոցառումը պետք է կազմակերպվի փոքր ձեռնարկությունների զարգացմանը խոչընդոտող կամ խոշոր ձեռնարկությունների համեմատ վերը նշված ոչ միատեսակ գործոնների ազդեցությունների փոխհատուցման միջոցով: Դրա հետ միասին հարկավոր է զուգակցել նաև ֆինանսական աջակցության («փափուկ» վարկեր, գրանտներ, վարկային երաշխիքներ) և մասնագիտական տեխնիկական աջակցության ծրագրերը: Այս միջոցառումներն իրագործելիս ճիշտ կլինի կենտրոնացնել պետական, հասարակական և միջազգային ծրագրերով ստացվող ռեսուրսներն այնպիսի ձեռնարկությունների համար, որոնք գործնականում ապացուցել են իրենց կենսունակությունը և ունեն աճի հստակ ներուժ:

Մասնավոր ձեռներեցության խթանում, նոր ձեռնարկությունների ստեղծում,

Այս միջոցառումները պետք է ուղղված լինեն պոտենցիալ ձեռներեցիներին իրական բիզնեսի կազմակերպիչներ դարձնելու նպատակին: Աջակցության մոտեցումը պետք է լինի՝ կենտրոնացնելով Հայաստանում բիզնես սկսելու գործնական հիմնախնդիրների լուծման շուրջ (ինֆորմացիոն ծառայություններ, դասընթացների կազմակերպում, աջակցություն ֆինանսավորման ձեռքբերման գործում, պետական գրանցման գործընթացի հեշտացում և այլն):

Փոքր բիզնեսի փաստաբանություն (advocating).

Այս միջոցառումները պետք է ուղղվեն փոքր բիզնեսի շահերը պաշտպանող հասարակական, մասնավոր և պետական ինստիտուտների ստեղծմանը և զարգացմանը:

Այս քաղաքականության արդյունավետությունը մեծապես կախված է նաև քաղաքականության իրագործման ձևերից և իրագործման համար պատասխանատու կազմակերպություններից: Այստեղ ընտրության հարց է առաջանում քաղաքականությունը իրականացնող պետական և մասնավոր սեկտորի կազմակերպությունների միջև: Արևմտյան Եվրոպայի փորձը վկայում է, որ մասնավոր սեկտորի ներգրավումը շատ ավելի արդյունավետ է, քան պետական կառույցների օգտագործումը: Արևմուտքում գոյություն ունեն քաղաքականության վարման տարբեր մոդելներ: Օրինակ Մեծ Բրիտանիայում, հաշվի առնելով հզոր առևտրաարդյունաբերական պալատների բացակայությունը, պետությունը ստիպված է իրականացնել քաղաքականությունը անմիջականորեն պետական կառույցների միջոցով: Կենտրոնական հարց է մնում առևտրաարդյունաբերական պալատներում անդամության հարցը: Եվրոպայի երկրներում, բացառությամբ Մեծ Բրիտանիայի, տեղական առևտրաարդյունաբերական պալատում գրանցումը և անդամությունը պարտադիր է տվյալ շրջանում գործող բոլոր ֆիրմաների համար: Ինչպիսի համակարգ էլ որ օգտագործի պետությունը, կարևոր է խուսափել ֆունկցիաների պոտենցիալ կրկնապատկումից, կամ ռեսուրսների կենտրոնացումից որևէ մեկ խնդրի վրա, ի վնաս մնացած, ոչ պակաս կարևոր խնդիրներին:

Հայաստանում իրագործվելիք քաղաքականության առումով առաջնությունը պետք է արվի այնպիսի ծրագրերին, որոնք համապատասխանում են փոքր բիզնեսի պահանջներին տեղական մակարդակով և միա-

Ժամանակ խրախուսում փոքր բիզնեսի աջակցությունն իրականացնող տարբեր կառույցների միջև համագործակցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] "Activity profile" UK Department of Trade and Industry, 1994.
[2] "Small Enterprise policy in UK" L. Storey, 1993.
[3] "Study of the SME sector in UK" Bannock & Peacock, 1994.

ԵՐԵՄԱՍՏԱՆ ԵՐԵՄԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Թամարյան Գ.

ՀՀ ԳԱՄ Մ.Զորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Հոդվածում ներկայացված է երեսպատման սալերի արտադրության հումք՝ քարային շինապաշարները և, ընդհանրապես, բնական երեսպատման սալերի արտադրության հիմնախնդիրները:

Тамарян Г. Промышленность облицовочных стройматериалов в Республике Армения.
В статье представлено сырье производства облицовочных плит - каменные строительные ресурсы, рассматриваются задачи производства облицовочных плит.

Tamarian G. The Industry of facing-stones and materials in the Republic of Armenia. The article discusses some aspects of economic problems of the facing-stones and materials in RA that are important for building the national economic strategy.

Երեսպատման շինանյութերի արդյունաբերությունը Հայաստանի շինանյութերի արդյունաբերության կարևոր ենթաճյուղերից է:


Քարամշակումը հայկական լեռնաշխարհում դեռ բրոնզի դարում եղել է արհեստի առանձին ճյուղ: Հայաստանում բազմաթիվ իրերն ու գործիքները վկայում են, որ պեմզան, կրաքարը, տուֆն ու օբսիդիանը, և ոչ միայն դրանք, կիրառվել են հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում [1]: Քարը, շինանյութ լինելուց բացի, օգտագործվել է մահ գարդեր ու գործիքներ պատրաստելու համար և արտահանվել է [2]:

Քարի մշակման արվեստը հայկական լեռնաշխարհում կիրառվել է ու շարունակվում է զարգանալ անսկիզբ ժամանակներից մինչև մեր օրերը:

Քարային շինապաշարները (ի դեպ, առավել լայն տարածում ունեն հրաբխային ապարները, որոնք զբաղեցնում են հանրապետության տարածքի երկու երրորդից ավելին [3]), նրբերանգների, կառուցվածքային ու մեխանիկական հատկությունների բազմազանությունը մեծ հնարավորություն են տալիս զարգացնելու երեսպատման շինանյութերի արտադրությունը [4]: Մինչև 1970-ական թվականները քարանյութերից երեսպատման սալերի արտադրությունը քիչ էր: Դրանից հետո, կապված բարձրահարկ շենքերի զանգվածային կառուցման և երկաթբետոնե հավաքովի տնաշինության հետ, արագ ընդլայնվեց, հասկապես՝ տուֆից ու բազալտից երեսպատման սալերի արտադրությունը:

1965 թվականի տվյալներով, քարից ստացվող արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է 22, 1970-ին՝ 207, 1975-ին՝ 700, 1980-ին՝ 956, 1985-ին՝ 1179, 1990-ին՝ 503 հազ. բ.մ. 1965-85 թվականներին ավելի քան 50 անգամ ավելացել է երեսպատման սալերի (տուֆ, բազալտ, մարմար, գրանիտ, տրավերտին) արտադրությունը, և հատկապես մեկ մլն բ.մ-ի սահմանագիծը: Այդ թվերը ցույց տանք գրաֆիկով (ՃԿ. 1):

1980-1985թթ. երեսպատման սալերի արտադրության ծավալը՝ ըստ տեսակների բնութագրում է հետևյալ աղյուսակը:



Նկ. 1.

Խ.Խ.	Արտադրանքի անվանումը	1980-85թթ. տոկոսային արտահայտությամբ
1	Երեսպատման սալեր, ընդամենը	100
2	Տուֆ	75
3	Բազալտ	12,5
4	Մարմար	5,7
5	Գրանիտ	0,9
6	Տրավերտին	5,9

1985թ. այս ենթաճյուղին բաժին էր ընկնում շինարդյունաբերության ձեռնարկությունների՝ 16, արդյունաբերական անձնակազմի՝ 24 և հիմնական ֆոնդերի՝ 12%-ը:

Հայաստանը քարային երեսպատման շինապաշարներով առաջնակարգ տեղ է զբաղում ոչ միայն մեծամասն, այլև ամբողջ աշխարհում. 1985-ին հանրապետությունում հաշվառվում էր 42 հանքավայր (269,6 մլն խ.մ ընդհանուր պաշարով), որից 16-ը՝ տուֆի, 15-ը՝ մարմարի, 2-ը՝ բազալտի, 2-ը՝ տրավերտինի և: Այն ժամանակ մշակվում էր 23 հանքավայր, որից 10-ը՝ տուֆի, 6-ը՝ մարմարի, 2-ը՝ բազալտի, 1-ը՝ տրավերտինի: Արդյունահանվել է 1,6 մլն խ.մ հանքաքանակ, որից 1,4 մլն խ.մ տուֆ, 58 հազ. խ.մ բազալտ, 102 հազ. խ.մ մարմար:

Հարկ է նշել, որ քարի մշակման հնագույն ձեռնարկություններից է Երևանի «Հայմարտար», որը գործում է 1930 թվականից: Ձեռնարկության հզորությունը (1980-85թթ. տվյալներով) տարեկան 40-50 հազ. բ.մ է [5]: